Հայտերի ընդունման հայտարարություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԵԴԻԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Այս փաստաթղթի հայերեն տարբերակը տրամադրվում է որպես հավելյալ տեղեկություն դիմումատուի համար: Ցանկացած անհամապատասխանության դեպքում կգերակայի անգլերեն տարբերակը:

1. Ծրագրի համառոտ նկարագիրը

Դոյչե Վելլե Ակադեմիայի (գլխավոր գործընկեր), Բրիտանական հեռարձակման կորպորացիայի Մեդիաէքշն ծրագրի («Բի-բի-սի»), «Բաց Հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ» Հայաստանյան մասնաճյուղի և հայկական երկու՝ Հետք և Ֆակտոր մեդիաընկերությունների կոնսորցիումը՝ պարգևատրվելով Եվրոպական Հանձնաժողովի կողմից, ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացնում է «Եվրոպական մեդիահարթակ Հայաստանում. կայուն և պրոֆեսիոնալ լրատվամիջոցների ստեղծում» ծրագիրը: Ծրագրի գլխավոր նպատակն է Հայաստանում զարգացնել կենսունակ մեդիա ոլորտ, որն ի վիճակի է կատարելու հսկիչ դեր հայ հասարակության համար: Մասնավորապես, ծրագրի նպատակն է աջակցել հայկական անկախ լրատվամիջոցներին՝ դառնալու ավելի պրոֆեսիոնալ և ֆինանսապես կայուն: Ծրագիրը նախատեսում է իրականացնել գործողությունների և միջոցառումների շարք, այդ թվում՝ մեդիամենեջմենթի առցանց դպրոցի (E-School) ստեղծում, փաստերի ստուգման և հետաքննական լրագրության հմտությունների զարգացում, կապերի ամրապնդում ինչպես Հայաստանի ներսում, այնպես էլ Արևելյան գործընկերության երկրների և Եվրոպական գործընկերների հետ, ինչպես նաև մարզային լրատվական կազմակերպություններին ֆինանսական աջակցություն:
Ծրագիրը մեկնարկել է 2020 թվականի դեկտեմբերի 1-ին և կտևի երեք տարի: Ծրագրի ողջ ընթացքում թիրախում կլինեն ազգային և տարածաշրջանային մեդիաընկերությունների ղեկավարներ և անկախ լրագրողներ, լրագրության

ֆակուլտետի ուսանողներ, փոքր մարզային լրատվամիջոցներ, ինչպես նաև համալսարաններ:

Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելել՝
https://www.facebook.com/DWAkademie.EuropeAndCentralAsia/

2. Հայտերի ընդունման առաջնահերթությունները

Ծրագիրը ֆինանսական օժանդակություն կտրամադրի Հայաստանյան 10 մարզային լրատվամիջոցների (հեռուստատեսություն, ռադիո, առցանց և տպագիր մամուլ)՝ հնարավորություն տալով մշակելու համապատասխան բովանդակության ստեղծման և կայունության ռազմավարություն:

Մարզային լրատվամիջոցները դիտարկվում են որպես Հայաստանում առավել կենսունակ և հզոր մեդիա դաշտի գործունեության կարևորագույն խթանողներ, քանի որ դրանք ուղղակիորեն կապ են ապահովում սպասարկվող համայնքների (հատկապես գյուղական բնակավայրերի) հետ: Այնուամենայնիվ, փոքր մարզային լրատվամիջոցները հաճախ հետ են մնում խոշոր գործընկերներից, այդ թվում նաև միջազգային դրամաշնորհների հատկացման դեպքերում: Դիմումների ընդունման այս հայտը նախատեսված է այն փոքր մարզային մեդիաընկերությունների համար, որոնք նպատակ ունեն լրագրողական ստանդարտների, խմբագրական կառուցվածքի և ֆինանսական մեթոդների բարելավմամբ առավել ակտիվ և կայուն դեր ունենալ համայնքային կյանքում: Առավել կենսունակ մեդիա դաշտ ունենալու համար անհրաժեշտ է մշակել բովանդակություն և պատրաստել զեկույցներ բնակչության կյանքի կարևորագույն ասպեկտների՝ բնապահպանության, հակամարտությունների և խաղաղության, մարգինալացված խմբերի իրավունքների և այլ թեմաների վերաբերյալ: Մարզային լրագրողներն ու լրատվական ընկերություններն ամենալավն են տիրապետում իրենց իսկ համայնքների խնդիրներին, ուստի նրանք ամենանպատակահարմար դիրքում են՝ նպաստելու ծրագրի դրույթների իրականացմանը:

Առաջարկվող նախագծերը պետք է.

- Լրացնեն և հարստացնեն կազմակերպության ընթացիկ աշխատանքը,
- ներառենգործողություններ, որոնց նպատակն է բարձրացնել հանրության տեղեկացվածությունն այնպիսի սոցիալական թեմաների վերաբերյալ, ինչպիսիք են բնապահպանական խնդիրները, մարգինալացված խմբերը, հաշմանդամություն ունեցող անձինք, կանայք, և/կամ տարածաշրջանային կայունությունը:

3. Դիմումատուներին տրվող առավելությունները և մասնակցության պահանջները

Հայտը շահած կազմակերպությունները կդառնան ինչպես Հայաստանյան, այնպես էլ Արևելյան գործընկերության անդամ երկրների և եվրոպական գործընկերների մեդիացանցի անդամ՝ ստանալով տարբեր համատեղ միջոցառումներին մասնակցելու հնարավորություն: Կստանան նաև վիդեոմետրիքսի միջոցով լսարանի հետազոտության և դրա արդյունքների վերաբերյալ խորհրդատվության տրամադրման(լսարանի պահանջներն ու սպասելիքներն առավել լավ հասկանալու համար)հնարավորություն:

Ստորև թվարկված միջոցառումներին մասնակցությունը պարտադիր է: Կազմակերպությունը պետք է ապահովի մասնակցության համար բավարար ռեսուրսներ և ժամանակ:

<u>Պարտադիր մասնակցության գործողությունների ցանկ.</u>

- Մասնակցություն առցանց դպրոցի ծրագրին ՝ ուղղված մարքեթինգի, ռազմավարական կառավարման, ֆինանսական և թվային ռազմավարության հմտությունների զարգացմանը (մոտ 20-ժամյա առցանց դասընթաց՝ երեք ամիս տևողությամբ)
- Հնարավորության դեպքում, մասնակցություն ուսումնական շրջագայությանը դեպի Եվրոպա (մոտավորապես 1 շաբաթ)
- Մասնակցություն սեմինարների և անհատական խորհրդատվությունների՝ բովանդակության ստեղծում, խմբագրական ռազմավարություն և կառավարում թեմաներով (մոտավորապես 2 սեմինար ՝ յուրաքանչյուրը 2-3 օր տևողությամբ):
- Մասնակցություն ցանցային հանդիպումներին և միջոցառումներին (1-2 միջոցառում)
- Առաջընթացի վերահսկման միջոցառումներ (շարունակական)

Ընտրված կազմակերպություններն իրենց հերթին պետք է բաց լինեն ուսանողների համար՝ վերջիններիս հնարավորություն տալով կիրառելու իրենց հմտություններն ու ձեռք բերելու լրագրողական աշխատանքի փորձ:

Հայտը շահելուց հետո կտրամադրվի մանրամասն ծրագիր և գործողությունների ժամանակացույց: Վերոնշյալ միջոցառումներին մասնակցության ծախսերը ֆինանսական աջակցության մաս ՉԵՆ կազմում: Դրանք տրամադրվում են հավելյալ, 6-րդ կետում նշված առավելագույն գումարի սահմաններում:

Կազմակերպական մակարդակում պահանջները հետևյալն են.

- ծրագրի դրույթների նկատմամբ հանձնառություն
    - ծրագրի բոլոր գործողություններին լիարժեք ներգրավվածություն և մասնակցություն
    - շարունակական զարգացման և կատարելագործման ձգտում
    - իգական սեռի թեկնածուների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց բավարար ներգրավվածություն
- Կայունություն.
    - ծրագրի ավարտից հետո մասնակիցների հետ կապ պահպանելու պատրաստակամություն
    - համապատասխան թեմաների շարունակական վերհանում
- Կազմակերպչական բնութագրիչներ.
    - հաղորդակցման հմտություններ
    - պատասխանատվության զգացում
    - ապաքաղաքականություն և չեզոքություն
    - լրագրողական էթիկա
- Բովանդակային և ադմինիստրատիվ տեսանկյունից ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու հուսալիություն.
    - ֆինանսական հուսալիություն (ապացուցված նախկին փորձով)
    - թափանցիկություն
    - արդյունավետ գործող կադրային կառուցվածք

4. Իրավասու գործողություններ

Առաջարկվող միջոցառումները պետք է առնչվեն բնության պահպանության և կլիմայական փոփոխությունների, մարդու իրավունքների պաշտպանության, մարգինալացված խմբերի և գենդերային խտրականության, հակամարտությունների կամ այլ սոցիալական զգայուն թեմաներին:

Ֆինանսավորում կարող է տրամադրվել մեդիա արտադրանքի համար, ինչպիսիք են առցանց և սոցիալական ցանցերը, ռադիո, վիդեո կամ հեռուստատեսային ռեպորտաժները (օրինակ՝ վերոնշյալ թեմաներով նյութերի շարք): Նախապատվությունը կտրվի առցանց լրատվամիջոցներին:

5. Ովքեր կարող են հայտ ներկայացնել

Հայտ ներկայացնելու համար դիմումատուն պետք է.

1. Լինի ՀՀ-ում գրանցված իրավաբանական, անկախ ոչ-առևտրային կամ մեդիա կազմակերպություն (հեռուստատեսային, ռադիո, առցանց կամ տպագիր մամուլ)
2. Գործի մայրաքաղաքից դուրս և ունենան մարզային գրասենյակ
3. Ունենա նվազագույնը 2 տարվա գործունեության փորձ՝ գրանցման օրվանից սկսած
4. Ունենա հաշվապահական հաշվառման հստակ համակարգ և ընթացակարգ, ներառյալ ֆինանսական գործարքների պատշաճ փաստաթղթավորումը

Առաջնահերթություն կտրվի այն լրատվամիջոցներին, որոնք հեռավոր բնակավայրերում լուսաբանում են հասարակությանն առնչվող թեմաներ և աջակցում են կին լրագրողներին:

6. Ծախսերի համակարգում

Ֆինանսական աջակցությունը հնարավորություն կտա ընտրված լրատվամիջոցին մշակելու սոցիալական նշանակություն ունեցող թեմաներով (բնապահպանություն, մարգինալացված խմբերի նկատմամբ խտրականություն, և այլն) կոնտենտ՝ ուղղված իր լսարանին (առավելապես գյուղական բնակչությանը):
Ֆինանսական աջակցությունը չպետք է օգտագործվի մեծ քանակությամբ թանկարժեք սարքավորումներ ձեռք բերելու կամ ենթակառուցվածքներում ներդրում անելու նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրող հանձնաժողովն այդ ծախսը կհամարի էական առաջարկվող ծրագրի իրականացման և դիմողի հետագա գործունեության համար: Ծրագրերը կարող են ներառել փոքր քանակությամբ և ոչ թանկ արժողությամբ տեխնիկական սարքավորումներ: Ֆինանսավորման մեծ մասը կներդրվի մարդկային ռեսուրսներում:

<u>Ընդունելի ծախսեր.</u>

- Անձնակազմի ծախսեր
- Երկրի ներսում տեղաշարժման ծախսեր (մեքենայի վարձույթ, հանրային տրանսպորտ)
- Հյուրանոցի և կեցության ծախսեր (օրապահիկ)
- Սարքավորում (միայն փոքր իրեր, օրինակ՝տեսախցիկ)
- Ծրագրին առնչվող ենթակառուցվածքային ծախսեր, ինչպես օրինակ գրասենյակի վարձակալություն, էլեկտրաէներգիայի, ինտերնետի, հեռախոս/ֆաքսի ծախսեր
- Այլ ծախսեր, ծառայություններ, ինչպես օրինակ տպագրական ծախսեր (էջադրում և տպագրություն), տեսանելիության ապահովման ծախսեր, ֆինանսական ծառայություններ
- Վարձավճարներ, անկախ և քաղաքացիական լրագրողների, մասնակից ուսանողների և խորհրդատուների համար վճարներ (վճար/օրավարձ), ստուդիայի վարձակալման ծախսեր, և այլն

Ոչ-ընդունելի ծախսեր.

- Մեծածավալ իրերի, տրանսպորտային միջոցների, կահույքի, հողի կամ շինության գնում
- Պարտքեր և պարտքերի սպասարկման վճարներ (տոկոսներ)
- Կորուստների համար պահուստավորում կամ հետագա հնարավոր պարտականություններ
- Ստացողի կողմից հայտարարագրված ծախսեր, որոնք ֆինանսավորվում են Եվրամիության այլ դրամաշնորհային ծրագրի կամ գործողության կողմից (այդ թվում՝ Եվրոպական զարգացման հիմնադրամի միջոցով)
- Արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված կորուստներ
- Գրասենյակի վարձակալության վճար, քանի դեռ դիմումատուն չի ապացուցել, որ գործողության իրականացման նպատակով անհրաժեշտ է հավելյալ տարածքիի վարձակալում
- Հարկեր, ներառյալ ԱԱՀ, քանի դեռ ստացողը չի ապացուցել, որ չի կարող դրանք ետ ստանալ
- Երրորդ կողմերին վարկի տրամադրում
- Ոչ նյութական ներդրումներ (օրինակ՝ առկա սարքավորումների, նվիրատվություններ, կամավորական աշխատանքի արժեքավորում (վալորիզացիա) և այլն)
- Պետական վարչակազմի աշխատակիցների աշխատավարձի ծախսեր, քանի դեռ իրականացվող գործողությունները հատուկ պայմաններով նախատեսված չեն ծրագրի իրականացման շրջանակներում, և համապատասխան պետական մարմինը ծրագրից դուրս այլ դեպքում դրանք չէր իրականացնի
- Աշխատակազմի ծախսերի մեջ ներառված կատարողական հավելավճարներ

7. Ֆինանսական աջակցության ծավալը

Յուրաքանչյուր հաջող ծրագրի իրականացման համար կտրամադրվի առավելագույնը 20,000 եվրոյի չափով դրամաշնորհ:

Դրամական միջոցները կփոխանցվեն երեք կամ ավելի մասերով՝(մանրամասներըկամրագրվեն պայմանագրում) համաձայն ծրագրի իրականացման և հաշվետվության ժամանակացույցի: Փոխհատուցվող ճշգրիտ գումարը պարբերաբար կենթարկվի մոնիթորինգի՝ պոտենցիալ խնդիրների հայտնաբերման և դրանց լուծում տալու նպատակով: Յուրաքանչյուր նախագիծ պարբերաբար կվերանայվի ընտրող հանձնաժողովի կողմից ՝ դրա շարունակական կենսունակությունը որոշելու համար:

8. Ֆինանսական աջակցության տրամադրման վայրը և ժամանակացույցը

Ֆինանսական աջակցության համար հայտադիմում ներկայացնող մեդիա ընկերությունները պետք է տեղակայված լինեն ՀՀ գյուղական, գերադասելի է հեռավոր շրջաններում: Ֆինանսական աջակցությունը կտրամադրվի երկու ժամանակահատվածի համար՝ առաջին փուլը կսկսվի 2021թ հուլիսի 15-ին և կավարտվի 2022թ մարտի 15-ին, երկրորդ փուլը կսկսվի 2022թ ապրիլի 1-ին և կավարտվի 2022թ դեկտեմբերի 31-ին: Յուրաքանչյուր դիմող կարող է հայտ ներկայացնել միայն մեկ փուլի համար:

9. Դիմումների քանակը և յուրաքանչյուր դիմումատուի համար նախատեսված դրամաշնորհի չափը

Յուրաքանչյուր դիմումատու կարող է ներկայացնել ընդամենը մեկ հայտ:

10. Ֆինանսական աջակցություն ստանալու համար դիմելու անհրաժեշտ փաստաթղթեր

Հայտը պետք է գրված լինի անգլերեն կամ հայերեն լեզվով: Ձեռագիր գրված հայտադիմումները չեն դիտարկվի: Դիմումը չպետք է գերազանցի 5 էջը: Նախատեսվող բյուջեն ներկայացվում է առանց նախապես տրամադրվող ձևանմուշի:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ՝

- Հավելված I՝ Դիմումի համար (օգտագործել տրամադրվող ձևանմուշը)

- Հավելված II՝ Աշխատանքային պլանի/ժամանակացույցի համար (օգտագործել տրամադրվող ձևանմուշը)
- Բյուջե (ձևանմուշ չի տրամադրվում)

Դիմումատուն էլեկտրոնային փոստով հայտադիմումին և լրացուցիչ հավելվածներին կից պետք է ուղարկի նաև ներքոնշյալ բնօրինակ փաստաթղթերի պատճեններ (սքան կամ ֆոտո տարբերակով).

1. Գրանցման վկայական
2. Վերջին տարեկան ֆինանսական հաշվետվություն
3. Երկու կամ երեք հաջողված աշխատանքի (նախագիծ, հոդված, ռեպորտաժ, և այլն) օրինակ (ձևանմուշ չի տրամադրվում)
4. Կազմակերպական աղյուսակ, որում պարունակում է տեղեկություն կազմակերպության մշտական և ժամանակավոր աշխատակիցների և վերջիններիս լրագրողական փորձառության վերաբերյալ (ձևանմուշ չի տրամադրվում)

11. Կեղծիքի և կոռուպցիայի կանխարգելում, բողոքների բավարարման մեխանիզմ

Դոյչե Վելլե Ակադեմիան որդեգրել է խարդախության և կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականության քաղաքականություն և իր աշխատակազմից ու գործընկերներից ակնկալում է ազնիվ և նվիրված գործունեություն: Այսպիսով դիմումատուն և/կամ համադիմումատուն երրորդ կողմին ցուցաբերվող ֆինանսական աջակցության ցանկացած փուլում (այսինքն տենդերի, դիմումի և գործունեության իրականացման ընթացքում)պետք է մանրակրկիտ մշակի և կիրառի խարդախության և կոռուպցիայի դեմ վստահելի համակարգ՝ համաձայն տեղական և միջազգային լավագույն փորձի և ստանդարտների:

Այս նպատակին հասնելու համար մենք պատրաստ ենք.

- Մշակել, կիրառել և հետևողականորեն իրականացնել արդյունավետ վերահսկողություն բոլոր մակարդակներում

- Համոզվել, որ կոռուպցիայի կամ խարդախության առաջացման դեպքում կկատարվի արագ և համապարփակ հետաքննություն, որի արդյունքներն ըստ անհրաժեշտության կհաղորդվեն շահագրգիռ կողմերին
- Անհրաժեշտ դեպքերում ձեռնարկել համապատասխան կարգապահական և իրավական գործողություններ
- Ցանկացած տեսակի ֆինանսական կորուստները վերականգնելու համար ձեռնարկել հնարավոր բոլոր ողջամիտ քայլերը
- Նմանատիպ կոռուպցիոն դեպքերը կանխարգելելու նպատակով վերանայել համակարգերն ու ընթացակարգերը
- Հավաստիանալ, որ հետագա ծրագրերի պլանավորման ընթացքում հաշվի կառնվեն բոլոր կոռուպցիոն ռիսկերը

Բողոքների բավարարմանվստահելի համակարգը երաշխավորում է, որ դիմումատուները և դրամաշնորհառուները կարող են արտահայտել իրենց մտահոգությունն ու կասկածները կապված ցանկացած տեսակի անօրինական գործողության հետ՝ դիմելով dw-Akademie.complain@dw.com :
Այս էլեկտրոնայն հասցեն պատկանում է Գերմանիայում Դոյչե Վելլե Ակադեմիայի գլխամասային գրասենյակին, որտեղ բողոքների բավարարման հարցերով զբաղվող թիմը կնախաձեռնի խնդրի լուծման հետագա քայլերը: Այսպիսով, յուրաքանչյուր դիմումատու կամ դրամաշնորհառու հնարավորություն կունենա կոնֆիդենցիալ (գաղտնի) կերպով լուծելու ցանկացած տեսակի հարց:

12. Պարզաբանում ստանալու համար ներկայացվող հայց

Դիմումատուն իրավունք ունի պարզաբանում ստանալու համար հարցեր ներկայացնել մինչև 14.05.2021թ. հետևյալ էլ.փոստին dw-akademie.armenia@dw.com: Բոլոր հարցերի պատասխանները կամփոփվեն առցանց հարթակում ծրագրի համար բացված ընդհանուր փաստաթղթում (https://share.ard-zdf-box.de/s/APym9qcN8ag76gi), ինչպես նաև էլեկտրոնային փոստով կուղարկվեն բոլոր դիմումատուներին ոչ ուշ քան 21.05.2021թ.:

Նշված ժամկետից հետո լրացուցիչ պատասխաններ այլևս չեն տրվի: Դիմումատուների նկատմամբ հավասար պայմաններ ապահովելու

նպատակով, դրամաշնորհ տրամադրող կազմակերպությունը աշխատանքային ծրագրի, գործունեության կամ առանձին գործողությունների վերաբերյալ նախնական կարծիք չի արտահայտի: Իր սեփական նախաձեռնությամբ դրամաշնորհ տրամադրող կազմակերպությունը կարող է շահագրգիռ կողմերին տեղեկացնել համապատասխան կայքում տեղադրված մրցույթի հայտարարության տեքստում ցանկացած տեսակի սխալի, անճշտության կամ բացթողման մասին: Հետևաբար, խորհուրդ է տրվում պարբերաբար այցելել կայք՝ թարմացումների, հրապարակված հարց ու պատասխանների մասին տեղեկացված լինելու համար: Ընդունման վերջնաժամկետը լրանալու պահից հետո դիմումի տեքստում ոչ մի փոփոխություն չի թույլատրվում: Որոշակի կետեր հստակեցնելու կամ ադմինիստրատիվ սխալներ շտկելու անհրաժեշտության դեպքում դրամաշնորհ տրամադրող կազմակերպությունը կարող է դիմել դիմումատուին միայն գնահատման գործընթացում: Որպես կանոն, վեջինն արվում է էլեկտրոնային փոստով: Տրամադրվող բոլոր կոնտակտային տվյալների ճշգրտության ու գործունակության պատասխանատվությունը կրում է բացառապես դիմումատուն: Կոնտակտային տվյալների որևէ փոփոխության դեպքում անհրաժեշտ է վերոնշյալ էլեկտրոնային հասցեին նամակ ուղարկելով տեղեկացնել նոր տվյալների մասին: Ընտրական գործընթացի արդյունքները գրավոր կերպով կհաղորդվեն դիմումատուներին: Մերժման դեպքում դիմումատուները կտեղեկացվեն մերժման պատճառների մասին: Պարգևատրման ընթացակարգի վերաբերյալ ոչ մի տեղեկություն չի բացահայտվի, քանի դեռ ծանուցագրերը չեն ուղարկվել շահառուներին:

13. Դիմումների ներկայացման վերջնաժամկետն ու հետագա ընթացակարգերը

Քայլ 1. Դիմումի, աշխատանքային պլանի, բյուջեի, ինչպես նաև աջակցող փաստաթղթերի (գրանցման վկայական, տարեկան ֆինանսական հաշվետվություն, իրականացվող ծրագրերի ցանկ, կազմակերպական աղյուսակ) ներկայացում՝ ըստ նախօրոք տրամադրվող ձևանմուշի:
Հղումը այստեղ՝ https://share.ard-zdf-box.de/s/APym9qcN8ag76gi

Դիմումի ներկայացման վերջնաժամկետ՝ 31.05.2021

Նախագծի առաջարկները կարող են ուղարկվել հետևյալ էլ. հասցեին՝

dw-akademie.armenia@dw.com

Քայլ 2. Դրամաշնորհի պարգևատրում և պայմանագրի կնքում:
Պայմանագրի ձևանմուշը կարող եք գտնելհետևյալ հղումով՝ https://share.ard-zdf-box.de/s/APym9qcN8ag76gi

14. Տեղեկատվական հանդիպում

Մենք կկազմակերպենք տեղեկատվական հանդիպում 17.05.2021թ-ին Երևանի ժամանակով 12:00-14:00-ին: Եթե ցանկանում եք մասնակցել այս միջոցառմանը, խնդրում ենք dw-akademie.armenia@dw.com էլեկտրոնային հասցեին ուղարկեք մասնակիցների անունները, էլեկտրոնային հասցեները և կազմակերպության անունը:

15. Վճարման կարգ և հաշվետվություն

Ֆինանսական աջակցություն ստացած յուրաքանչյուր շահառու ծրագրի մեկնարկից երեք ամիս անց պետք է ներկայացնի բովանդակային և ֆինանսական հաշվետվություն: Երկրորդ բովանդակային և ֆինանսական հաշվետվությունը պետք է ներկայացվի մեկնարկից վեց ամիս անց: Վերջնական հաշվետվությունները պետք է ներկայացվեն պայմանագրի ավարտից երկու շաբաթանց:

Հաջողված նախագծերը պայմանագրի ստորագրումից հետո կստանան նախաֆինանսավորում՝ ընդհանուր բյուջեի 40%-ի չափով: Մյուս 40%-ը կփոխանցվի երեք ամիս հետո, երբ նախապես տրամադրված գումարի 80%-ը արդեն ծախսված կլինի՝ ըստ ծախսերի պլանի, իսկ բովանդակային և ֆինանսական հաշվետվությունները՝ հաստատված: Մնացյալ 20%-ը կփոխանցվի վեց ամիս անց, երբ նախորդող վճարման 80%-ը արդեն ծախսված կլինի՝ ըստ ծախսերի պլանի, իսկ բովանդակային և ֆինանսական հաշվետվությունները՝ հաստատված: Պայմանագրի պատրաստման

ընթացքում կողմերը կարող են քննարկել վճարման կարգը՝ ելնելով կազմակերպության չափերից:

16. Դիմումների գնահատման և ընտրության կարգ

Ֆինանսական աջակցությունը մրցութային կարգով կտրամադրվի 10 մարզային լրատվամիջոցի (5 լրատվամիջոց կընտրվի 2021թ հուլիս - 2022թ մարտ, 5 այլ լրատվամիջոց՝ 2022թ ապրիլ-դեկտեմբեր ժամանակահատվածի համար): Ընտրական հանձնաժողովը կազմված կլինի Դոյչե Վելլե Ակադեմիա, «Բի-բի-սի» և Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան կազմակերպությունների երկուական ներկայացուցչից (1 ծրագրի ղեկավար և 1 ծրագրի տնօրեն), ովքեր կհաստատեն ֆինանսական աջակցությունը:

Հինգ էջը չգերազանցող հայտը տեղեկություններ պետք է տրամադրի հետևյալի մասին.

- Առաջարկի համապատասխանությունը ծրագրին
- Կազմակերպության կարողությունները բարելավելու և ընդհանուր առմամբ ծրագրին մասնակցելու շարժառիթներ
- Կոնտենտի ստեղծման գաղափարներ՝ հաշվի առնելով տեղական բնակչության կարիքները և համապատասխան թեմաները (ներառյալ բնապահպանական, մարդու իրավունքների, մարգինալացված խմբերի նկատմամբ խտրականության, Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության և այլ սոցիալական զգայուն թեմաներ):
- Ծրագրի իրականացման ընթացքում առաջացող ռիսկերի նկարագրություն
- Կազմակերպական կարողություններ (անձնակազմի կառուցվածք, հաշվապահական համակարգ և ընթացակարգեր՝ ներառյալ ֆինանսական գործարքների պատշաճ փաստաթղթավորում, իրականացված նախագծերի հողում, և այլն), ինչպես նաև առաջարկվող գործողություններն իրականացնելու համար անհրաժեշտ կառավարման համակարգ

- Նախատեսվող գործողությունների իրականացման համար անհրաժեշտ բյուջե և ժամանակացույց

Ընտրական հանձնաժողովը դիմող կազմակերպություններին կգնահատի ըստ վերոնշյալ չափանիշների և մանրակրկիտ ու արդար վարկանիշավորման համակարգի (գնահատում ըստ հետևյալ կատեգորիաների՝ համապատասխանություն ծրագրին, շարժառիթներ, կազմակերպական ներուժ, ղեկավարման համակարգ, բովանդակություն, ռիսկեր): Ամենաբարձր գնահատական ստացած նախագծերը կպարգևատրվեն: Դրամաշնորհ ստացած կազմակերպությունների ցանկը կհրապարակվի մեր սոցիալական մեդիայի էջում:

Գնահատման չափանիշները բաժանվում են առաջնային բաժինների և ենթաբաժինների: Թիվ 1 բաժնի տակ նշված են բացառող չափանիշները: Եթե որևէ չափանիշ չի համապատասխանում, ապա դիմումը կմերժվի՝ միայն այդ կետից ելնելով: 2-րդ և 3-րդ բաժինների համար յուրաքանչյուր ենթաբաժնին կտրվի 1-ից մինչև 4-ը սահմանված միավոր՝ հետևյալ կերպ. 1=թերի է; 2=համապատասխանում է; 3=լավ է; 4=շատ լավ է: 2.5.2 կետում պահանջվող չափանիշները գնահատվելու են՝ ելնելով ներկայացված փաստաթղթերի որակից: Առավել լավ ներկայացված առաջարկները կստանան ավելի բարձր միավորներ:

1. ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ՍՏՈՒԳՈՒՄ	այո	Ոչ
1.1 Հայտը ներկայացվել է սահմանված ժամկետում		
1.2 Հայտատուն բավարարում է 5-րդ կետում նշված իրավասության չափանիշները		
1.3 Օժանդակող փաստաթղթերը ներկայացվել են ըստ նախանշված ուղեցույցների		
*Եթե նախորդող բոլոր պատասխաններն ԱՅՈ են, ապա դիմումն ընդունվում է		
ՈՐՈՇՈՒՄ		
2. ԴԻՄՈՒՄԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	Բալ	24
2.1 Առաջարկի համապատասխանությունը նախագծին	Առավելագույնը 4	

2.2 Մասնակցության շարժառիթը	Առավելագույնը 4	
2.3 Բովանդակության ստեղծման համար գաղափարների որակ/արդիականություն	Առավելագույնը 4	
2.4 Գործողությունների իրականացման ընթացքում առաջացող հնարավոր ռիսկեր և դրանք մեղմացնող միջոցառումներ	Առավելագույնը 4	
2.5.1 Կազմակերպչական ներուժ (Դիմումատուի և անձնակազմի ընդհանուր փորձ, իրականացրած նախագծեր (Հավելված), դոնորներ/ֆինանսավորման աղբյուրներ, հաշվապահական հաշվառման և փաստաթղթավորման համակարգեր)	Առավելագույնը 4	
2.5.2 Կառավարման համակարգ (մենեջմենթ) և աշխատակազմի կառուցվածք, մշտական և ժամանակավոր աշխատակիցների թիվ (կազմակերպական աղյուսակ)	Առավելագույնը 4	
3. Բյուջեի և աշխատանքային պլանի գնահատում	Բալ	8
3.1 Գործողությունները ճի՞շտ են պլանավորված, և արդյոք իրատեսական է տրված ժամկետում դրանց իրականացումը	Առավելագույնը 4	
3.2 Համապատասխանու՞մ է արդյոք բյուջեն նախատեսված գործողություններին: Ծախսերի վերլուծություն	Առավելագույնը 4	
ԸՆԴԱՄԵՆԸ		32

Դիմումատուի հաստատումից հետո Դոյչե Վելլե Ակադեմիա, «Բի-բի-սի» և Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված ընտրական հանձնաժողովը և ֆինանսական վարչակազմը կմշակեն դրամաշնորհի պայմանագիրը՝ համաձայնեցված ժամկետներով և ֆինանսավորմամբ:

17. Ֆինանսական աջակցության տրամադրման ինդիկատիվ ժամանակացույց

2021թ տրամադրվող ֆինանսական աջակցություն (5 կազմակերպություն)

Հայտերի ընդունման հայտարարություն	**Մայիս 3**, 2021թ
Առցանց տեղեկատվական հանդիպում	**Մայիսի 17**, 2021թ

Հայտերի, աշխատանքային պլանի և բյուջեի ընդունման վերջնաժամկետ	**Մայիսի 31**, 2021թ
Հայտերի գնահատում	Հունիս, 2021թ
Գնահատման արդյունքների վերաբերյալ ծանուցում դիմումատուին	Հուլիս 1, 2021թ
Ընտրված դիմումատուների հետ պայմանագրի կնքում և ծրագրի վերաբերյալ կողմնորոշում, այդ թվում՝ ծրագրի ծախսերի ճշգրիտ հաշվառում	Հուլիս15, 2021թ
Ծրագրի իրականացման մեկնարկ	Հուլիս15, 2021թ
Ծրագրի իրականացման ավարտ	Մարտ15, 2022թ

2022թ տրամադրվող ֆինանսական աջակցություն (5 կազմակերպություն)

Ընտրված դիմումատուների հետ պայմանագրի կնքում և ծրագրի վերաբերյալ կողմնորոշում, այդ թվում՝ ծրագրի ծախսերի ճշգրիտ հաշվառում (հուշում՝ ընտրությունն արդեն կատարվել է առաջին փուլում): Այս փուլում, մինչ պայմանագրի կնքումը, կատարվում է միայն կրկնակի վերահաստատում, որ բոլոր չափանիշները բավարարված են)	Մարտ 15, 2022թ
Ծրագրի իրականացման մեկնարկ	Ապրիլ1, 2022թ
Ծրագրի իրականացման ավարտ	Դեկտեմբեր 31, 2022թ

18. Անձնական տվյալների պաշտպանություն

Ցանկացած անձնական տվյալ կօգտագործվի բացառապես սույն հայտի կատարման, կառավարման և մոնիթորինգի նպատակներով, ինչպես նաև կարող է փոխանցվել Եվրոպական Միության օրենսդրությամբ նախատեսված մոնիթորինգի կամ վերահսկման աշխատանքներ իրականացնող մարմիններին: Դիմումատուն(երը) ունի իր անձնական տվյալների հասանելիության և վերջիններս շտկելու իրավունք: Անձնական տվյալների մշակման հետ կապված որևէ հարց ունենալու դեպքում, դիմումատուն կարող է հարցերն ուղղել Դոյչե Վելլեին:

Դիմումատուն(երը) սույն դիմումի մեջ պետք է ներկայացնի համապատասխանող անձնական տվյալներ՝ համաձայն անձնական

տվյալների պաշտպանության մասին ԵՄ և ազգային օրենսդրության (ներառյալ թույլտվությունները կամ ծանուցման պահանջները):
Դիմումատուն(երը) պետք է սահմանափակի անձնական տվյալների հասանելիությունը՝ դրանք օգտագործելով սույն պայմանագրի կատարման, կառավարման և մոնիթորինգի համար խիստ անհրաժեշտ դեպքերում, ինչպես նաև ընդունի անվտանգության բոլոր համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցները:

19. Հավելվածների ցանկ

Հավելված I:	Դիմումի Ձև
Հավելված II:	Աշխատանքային պլան/ ժամանակացույց
Հավելված III:	Պայմանագրի նախագիծ (ներկայացնելու անհրաժեշտություն չկա)
ՀավելվածIV:	Ընդհանուր դրույթներ (ներկայացնելու անհրաժեշտություն չկա)